ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՈՂՋՈ՞ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, ՎԵՐԱՏԵՍՉԻՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Քաղցր հուզումով գրի կառնենք այս կոնդակը, նշելու համար Ձեր Սրբազնության երեսուն տարիներու ծառայությունը մեր Ս. եկեղեցիին:

Վասպուրական աշխարհի զավակ, Աղթամարի խորհուրդովը սնած, Ձեր մանկության օրերուն մեր Ազգին անավոր տառապանքը տեսած ու ապրած, ռաբոբիկ ու քաղցած, Ձեր թշվառ հայրենակիցներուն հետ, գաղթի սև օրերուն Ս. Էջմիածին հասած, ապա որբացած և երկար թափառումներե վերջ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքը ապաստան գտած, Ձեր ջանասեր ուսմանց և Ձեր իրավ արժանիքներուն շնորհիվ կուսակրոն քահանա ձեռնադրված եք, և որպես ուխտապան և անձնվեր միաբան, ծառայած եք Ս. Քաղաքի Հայոց Պատրիարքական Աթոռին, զանազան հոգևոր, վարչական ու կրթական պաշտոններ վարելով հավասար բարեխղճությամբ և արդյունավետությամբ:

Իսկ վերջին չորս տարիներու ընթացքին, Մեր կողքին եք անա, իբրև վերատեսուչը Մայր Աթոռիս Հոգևոր Ճեմարանին, գնահատված ու սիրված Մեզմե և մեր ամբողջ միաբանութենեն:

Ձերդ Սրբազնության հոգևոր գործունեության երեսնամյա այս հանգրվանին, Մեզ համար հույժ մխիթարական է տեսնել Ձեր անձին ու Ձեր կյանքին մեջ՝ նշմարիտ հոգևորականը՝ հեզ և խոնարհ, սրտով բարի և մաքուր, ժիր և կարգապան, միշտ հավատարիմ Ձեր ուխտին, Ձեր կոչումին, մեր Ս. եկեղեցիի և մեր ժողովուրդի սիրովը տոգորված, միշտ պատրաստ աշխատելու անձանձրույթ և անտրտունջ:

Անա քրիստոնեական իրավ առաքինություններ, որոնցմով կփայլի Ձեր հոգևոր-բարոյական անձնավորությունը:

«ԵՐԱՆԻ՜ ՈՐ ՍՈՒՐԲ ԵՆ ՍՐՏԻՒՔ, ՉԻ ՆՈՔԱ ՁԱՍՏՈՒԱԾ ՏԵՍՑԵՆ»:

Իբրև հայրական սիրո և անկեղծ գնահատանքի արտահայտություն, կշնորհավորենք Ձեր հոգևոր ծառայության երեսուն տարիները և Ձերդ Սրբազնության կշնորհենք ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ, մաղթելով Ձեզ կյանքի և աշխատանքի ևս երկար, խաղաղ տարիներ քաջառողջությամբ, որպեսզի մինչև խոր ծերություն ապրիք և խնդությամբ ծառայեք Տիրոջ Այգիին մեջ, ի շինություն մեր ժողովուրդի հոգևոր կյանքին, ի փառս աստվածակառույց Ս. Էջմիածնին և հերջանկություն Մեզ և Ձեզ:

ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 4-ն դեկտեմբերի
1960 Քրիստական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի: